

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
22-ԻՆ ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին`

Խորհրդի անդամներ`

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Հ. Քուշկյան	ՀՀ առողջապահության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Վ. Այվազյան	ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Խ. Հարությունյան	ՀՀ Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Հ. Հակոբյան	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ռ. Մարտիրոսյան	ՀՀ ԳԱԱ-ի նախագահ
Կ. Դանիելյան	<<Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի նախագահ
Դ. Գերչևա	ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի մշտական ներկայացուցիչ
Ա. Մարտիրոսյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի բնապահպանական ծրագրերի ղեկավար
Հ. Սայադյան	ՀՀ աշխարհագրական ընկերության գիտական քարտուղար
Գ. Օզանեզովա	ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ
Հ. Սարգսյան	<<Տապան էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ

Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ե. Մանվելյան	<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ի նախագահ
Ս. Աղամյան	<<Հասարակական էկոլոգիական դաշինք>> ՀԿ-ի համակարգող
Լ. Յագուբյան	<<Սպառողների իրավունքների պաշտպանություն>> ՀԿ-ի նախագահ
Ա. Իսկոյան	<<Շրջակա միջավայր իրավական պահպանության կենտրոն>> ՀԿ-ի նախագահ
Ա. Վերմիշյան	<<Բուրգ>> բնապահպանական երիտասարդական ՀԿ
Ա. Աղաջանյան	<<Արզնու տոհմային թռչնաբուծական, տավարաբուծական, խոզաբուծական ֆարմիկա>> ԲԲԸ-ի տնօրեն
Հրավիրվածներ`	
Ս. Պապյան	ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ս. Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Տ.Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Խ. Ավայան	ՀՀ վարչապետի օգնական
Վ.Նիկոյան	ՀՀ վարչապետի օգնական
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Յ. Պողոսյան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Վ. Կաժոյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ
Ա. Գաբրիելյան	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համակարգող

Դ. Հարությունյան	ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող
Լ. Սարգսյան	<<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա>> ՀԿ-ի ներկայացուցիչ
Ա. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
Ա. Գասպարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ

1. Բացում, օրակարգի ներկայացում, հաստատում

(Կ.Դանիելյան, Հ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

1. <<Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի>> ՀԿ-ի, *UNEP* ազգային կոմիտեի նախագահ Կ.Դանիելյանը տեղեկացրեց, որ հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվել էր օրակարգում ներառել <<Խոսքովի անտառ>> պետական արգելոցի տարածքների մասին հարցը, և, քանի որ ՀՀ բնապահպանության նախարարության հետ առկա են որոշակի տարաձայնություններ, ապա նպատակահարմար է հարցը առաջիկայում քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

2. <<Տապան էկո-ակումբ>> ՀԿ-ի նախագահ Հ. Սարգսյանը հարց բարձրացրեց ԿԶԱԽ-ի նախորդ նիստի արձանագրության որոշ անճշտության մասին՝ կապված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հիմնախնդրի հետ, ինչպես նաև առաջարկեց անդրադառնալ համապատասխան հանձնարարականների կատարման ընթացքին:

Նա նաև նշեց, որ անհրաժեշտ է ապահովել իրականացվող ծրագրերի շարունակականությունը և լայնորեն իրազեկել հասարակությանը դրանց արդյունքների և ԿԶԱԽ-ի շրջանակներում ընդունվող որոշումների մասին:

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Անհրաժեշտության դեպքում նախապատրաստել խորհրդակցություն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ՝ «Խոսքովի անտառ» պետական արգելոցի հարցը քննության առնելու նպատակով:

2) ԿԶԱԽ-ի նիստերի արձանագրությունները համաձայնեցնել ԿԶԱԽ-ի քարտուղար Կ. Դանիելյանի հետ, որից հետո ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հաստատմանը:

3) Անհրաժեշտության դեպքում ԿԶԱԽ-ի հաջորդ նիստին անդրադառնալ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հիմնախնդրի հետ կապված հանձնարարականների կատարման ընթացքին:

4) ԿԶԱԽ-ի նիստերի վերաբերյալ պատրաստել և տարածել մամլո հաղորդագրություններ:

2. ՄԱԿ-ի «Ռիո + 20» համաշխարհային գործընթացի արդի բնութագիրը և ՀՀ մասնակցությունը, խնդիրներն ու գործունեության ծրագիրը

 (Վ. Կաժոյան, Կ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

1. «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի» ՀԿ-ի, UNEP ազգային կոմիտեի նախագահ Կ. Դանիելյանը ներկայացրեց Ռիո-2012 («Ռիո +20», «Ստոկհոլմ+40») խնդիրները և թեմաները :

Նշեց, որ քննարկվում են գազաթաժողովի ղեկավարումը, նախապատրաստման և մասնակցության մակարդակները, 2011թ. հիմնական ժամանակացույցը ՄԱԿ-ի շրջանակներում, ինչպես նաև Կայուն զարգացման համաթվի շրջանառվող հնարավոր տարբերակները և երկրների բնութագիրն այդ համատեքստում:

Հենվելով նախորդ գազաթաժողովների (Ռիո-1992, Յոհանեսբուրգ- 2002) որոշումների, ինչպես նաև անցած տասնամյակի հիմնախնդիրների ու նվաճումների ուսումնասիրությունների վրա՝ Գազաթաժողովը հատուկ քննարկման է ենթարկելու հետևյալ հիմնահարցերը՝ տրանսպորտ, քիմիկատներ, թափոնների կառավարում, հանքարդյունաբերություն, կայուն արտադրություն և սպառում:

Մշակվել են առաջարկություններ նշված ոլորտներում տնտեսական, սոցիալական և էկոլոգիական առաջնայնությունների ներդաշնակեցման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվել բնական ռեսուրսների առավելագույնս էֆեկտիվ, ինայողաբար օգտագործման, հիմնախնդիրների լուծման և որոշումների ընդունման ընթացքում հասարակայնության մասնակցության, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման վրա: Շեշտվել է նաև կրթական կոմպոնենտի՝ ՄԱԿ-ի <<Կրթություն հանուն կայուն զարգացման>> տասնամյակի իրականացման կարևորությունը:

Մշակված և ընդունված առաջարկությունները պետք է ներկայացվեն մայիսին՝ Նյու-Յորքում կայանալիք ՄԱԿ-ի Կայուն զարգացման հանձնաժողովի նիստին (CSD-19):

Կ. Դանիելյանը կարևորեց նաև ՀՀ ներկայացուցիչների մասնակցության ապահովումը վերոհիշյալ գործընթացներին և առաջարկեց ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով <<Ռիո+20>> շրջանակներում գործունեությունը օպերատիվ համակարգելու նպատակով:

2. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ Վ. Կաժոյանը տեղեկացրեց, որ 2011 թվականի փետրվարի 28-ից մարտի 4-ը Նյու Յորքում կայացել է ՄԱԿ-ի Կայուն զարգացման հանձնաժողովի 19-րդ նստաշրջանի միջկառավարական նախապատրաստական նիստը, որին մասնակցել է ԱԳՆ-ի միջազգային կազմակերպությունների ՄԱԿ-ի բաժնի վարիչ Նունե Զաստուխովան: Նշեց նաև, որ հանձնաժողովի նպատակն էր 2011 թվականի մայիսի 2-13-ի նստաշրջանի նախապատրաստման աշխատանքները կազմակերպելը:

Վերջին նախապատրաստական հանդիպման և մայիսին կայանալիք հանձնաժողովի նստաշրջանի հիմնական թեմատիկ խնդիրներն են՝ տրանսպորտի, թափոնների, քիմիկատների, հանքարդյունաբերության և կայուն արտադրության և սպառման համար տասնամյա շրջանակային ծրագիրը:

Արդիական է նաև մաքուր տեխնոլոգիաների և արտադրական պրոցեսների խթանումը, վերականգնվող էներգիայի աղբյուրների լայն կիրառումը, թափոնների կրճատումը, դրանց

վերամշակումը և այդ խնդիրների լուծման համար նորարարական ֆինանսական մեխանիզմների որոնումը, կանաչ տնտեսության զարգացումը: Տեղեկացրեց նաև, որ այս հարցերը լինելու են 2012 թվականին Ռիոյում կայանալիք ՄԱԿ-ի Կայուն զարգացման համաժողովի օրակարգի կենտրոնում:

ՀՀ ներկայացուցիչն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել 19-րդ նստաշրջանի նախապատրաստական հանդիպման աշխատանքներին՝ ելույթներ ունենալով նաև տրանսպորտի, թափոնների, քիմիկատների թեմատիկ հարցերի շուրջ:

3. ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պասյանն, անդրադառնալով ԿԶԱԽ-ի քարտուղար Կ.Դանիելյանի միջգերատեսչական (բազմակողմանի) հանձնաժողով ստեղծելու առաջարկին՝ նպատակահարմար համարեց, հիմք ընդունելով նախկինում գործող հանձնաժողովի ձևաչափը, ձևավորել նորը, քանի որ վերջինիս կողմից իրականացված աշխատանքը համարվել է բավականին արդյունավետ, որը նախագահել են՝ ՀՀ արտաքին գործերի նախարարը և ՀՀ բնապահպանության նախարարը, իսկ կազմում ընդգրկված են եղել Կայուն զարգացման խորհրդում ներգրավված նախարարությունները՝ նախարարների տեղակալների մակարդակով, հասարակական կազմակերպությունների և գիտական շրջանակների ներկայացուցիչներ:

4. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պասյանին և ԿԶԱԽ-ի քարտուղար Կ.Դանիելյանին ձևավորել և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հաստատմանը ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովի կազմը՝ հիմք ընդունելով նախորդ հանձնաժողովի ձևաչափը (համապատասխան ճշտումներով), որը կիրականացնի <<Ռիո+20>> գործընթացի շրջանակներում գործունեության ծրագրի մշակումը, համակարգումը և վերահսկողությունը:

3. ՀՀ կլիմայի փոփոխության երկրորդ ազգային հաղորդագրության ներկայացում

(Ա. Գաբրիելյան, Գ. Օզանեզովա, Տ. Սարգսյան)

1. Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համակարգող

Ա. Գաբրիելյանը ներկայացրեց Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ներքո ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակված Կլիմայի փոփոխության երկրորդ ազգային հաղորդագրությունը: Այն համապատասխանում է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության և տեխնոլոգիաների փոխանցման բնագավառում կողմերին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությանը:

Տեղեկացրեց, որ հաղորդագրության մեջ ամփոփված են Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերի համար կլիմայի փոփոխության հիմնական մարտահրավերները: Ներկայացված են ուսումնասիրությունները, կրթության և իրազեկության բարձրացման ուղղությամբ իրականացված միջոցառումները, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերում կլիմայի փոփոխության խնդիրների լուծման համար հիմնական կարիքները և առաջարկություններ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում դրանց իրականացման համար:

Նշեց նաև, որ ներկայումս ընթանում են նախապատրաստական աշխատանքներ Կլիմայի փոփոխության երրորդ ազգային հաղորդագրության պատրաստման նպատակով, որտեղ հաշվի են առնվելու Երկրորդ ազգային հաղորդագրության պատրաստումից հետո տեղի ունեցած զարգացումները ինչպես երկրում, այնպես էլ Կոնվենցիայի շրջանակներում:

2. ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանը

տեղեկացրեց, որ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի համակարգող Ա.Գաբրիելյանի կողմից ներկայացված միջոցառումների ծրագիրը բխում է ռազմավարական ծրագրերից, որոնք ՀՀ կառավարության կողմից տարբեր ոլորտներում իրականացվում են:

3. ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյանը հարցադրեց`

1) թե Կիոտոյի արձանագրությունից բխող մաքուր զարգացման մեխանիզմով քանի նախագիծ է աշխատում և քանիսն են ստացել փոխհատուցում ջերմոցային գազերի արտանետումների կրճատման հետ կապված.

2) 2012 թվականից հետո, քանի որ պարտավորություններն ավարտվում են, ինչպիսին է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ջերմոցային գազերի արտանետումների կրճատման նկատմամբ.

3) ստեղծվել է արդյոք ֆոնդ, որտեղ բիզնես համայնքը, ՀՀ կառավարությունը և հասարակական սեկտորը միասնական կմասնակցեին և կայուն զարգացման մեխանիզմներով ներդրված ծրագրերին աջակցություն կցուցաբերեին:

4. ՀՀ Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյանի հարցերին անդրադառնալով Ա. Գաբրիելյանը նշեց, որ`

1) լիազոր մարմնի կողմից հաստատված է 12 նախագիծ, իսկ միջազգային մարմնի կողմից 5 նախագիծ.

2) նշեց, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է սահմանափակել ջերմոցային գազերի արտանետումների աճը, բայց ոչ նվազեցնել, և այդ գործունեությունը չպետք է խաթարի երկրի զարգացման գործընթացը.

3) նշեց, որ ունեն նախագիծ <<ածխածնային հիմնադրամ>> ստեղծելու վերաբերյալ, որը շատ շահեկան է, քանի որ միջազգային կոնվենցիայի շրջանակներում տարվող բանակցություններում այդ մոտեցումն արդեն հաստատվել է, ինչը կրերի լրացուցիչ գումարներ` պարտավորությունների կատարման համար:

5. ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հ. Հակոբյանն առաջարկեց ջրային ռեսուրսների կառավարումը և օգտագործումը դարձնել

առանձին քննարկման առարկա՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ կապված առկա խնդիրները:

6. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ԿԶԱԽ-ի քարտուղար Կ.Դանիելյանին՝ ՀՀ կառավարության աշխատակազմի հետ համատեղ Կայուն զարգացման ազգային խորհրդի նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի վերաբերյալ այսուհետ ներկայացնել նաև համապատասխան հանձնարարականների կատարման մասին ԿԶԱԽ-ի որոշման նախագծերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ